ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
Գործողություն 6.3

Զրի հաշիվների կազմում I

Զրի հաշիվներ

2017թ. հունվարի 30 – ից փետրվարի 3

STATISTICS DENMARK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության պարտադիր արդյունքը ՊԱ7

Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

Չափանիշներ

- Տվյալների աղբյուրների գույքագրում (հասանելիություն, տեղեկատվական հոսք) սահմանված ջրի հաշիվների համար (2016թ. ապրիլ)
- Ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն (2017թ. հունվար)
- Հանդիպում շահառուների հետ (2017թ. հուլիս)
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

6.3 առաքելության նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակ

- Ջրի հաշիվների կազմում
- Ինչպես ինտեգրել դրանք ազգային հաշիվներում
- Քննարկումներում ներգրավել համապատասխան շահառուների

Սպասվող արդյունք

- Առաքելության հաշվետվություն ջրի հաշիվների կազմման և դրանք ազգային հաշիվներում ինտեգրելու վերաբերյալ
- Սահմանվել է հաջորդ գործողությունների վերաբերյալ աշխատանքային ծրագիրը.
  - 6.5. Ջրի հաշիվների կազմում II (2017թ. մարտի 27-30-ը)
  - 6.6. Ձեռքբերումների վերահսկում և առաջարկություններ ապագայի համար

(2017թ. մայիսի 22-25)

Եզրակացություններ (1)

- ՀՀ ԱՎԾ-ն լավ աշխատանք է կատարել՝ Իստատի կողմից նախորդ առաքելության վերջում և Իտալիայում կայացած ուսուցողական այցի ընթացքում արված առաջարկություններին և ֆիքսված ճանապարհային քարտեզին համահունչ (գործողություն 6.2 և 6.4).

- Ջրի հաշիվների ցուցանիշների վերանայումն այս շաբաթ լի էր նոր կետերով, որոնք խորը ուսումնասիրվեցին՝ հղումներ անելով միջազգային վիճակագրական ստանդարտներին (Միավորված ազգեր, Եվրոստատ) նախքան աղյուսակների վերջնական վավերացումը

- Ներկայիս 6.3 գործողության շրջանակներում մշակվել են ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների (ֆիզիկական և ֆինանսական) տեսական և գործնական ասպեկտները

Եզրակացություններ (2)

- Ներկայացվել՝ են ջրի ֆինանսական հաշիվների մեթոդաբանական ասպեկտները՝ հաշվի առնելով միջազգային շրջանակները (SEEA2003, SEEA-Ջուր 2012).

- Հայկական շահառուների հետ հանդիպումը հետաքրքիր էր. մասնավորապես ազգային հաշիվների հետ կապված համագործակցությունը տվեց առաջին պտուղները ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների ֆինանսական մասում ներկայացված որոշ թվային տվյալների տեսքով

- Այս օրերին ջրամատակարարման և ջրօգտագործման՝ ֆիզիկական և հիբրիդային աղյուսակների կազմումը կարևոր պահ էր՝ որոշ կարևոր կետերի քննարկման, անորոշությունների հաղթահարման, ավելի լավ հասկանալու համար կասկածների դիտարկման համար:

Եզրակացություններ (3)

- Այս ամիսներին ջրի հետ կապված հարցերի վերաբերյալ Հայաստանում առկա տվյալները վերլուծելուց հետո, ինչպես նաև հաշվի առնելով ՋՀ հարցերի վերաբերյալ ընդհանուր առաջընթացն ամբողջ աշխարհում՝ մենք կարծում ենք, որ սույն թվինինգ ծրագրի նպատակը պետք է նյութականանա Ներքին Ջրերի Աղյուսակների/ջրօգտագործման և ջրամատակարարման, ինչպես նաև արտահոսքերի վերաբերյալ ֆիզիկական աղյուսակների/ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների տեսքով:

- Հաշվի առնելով հայկական տվյալների բազային հարուստ լինելը՝ կարծում ենք, որ օգտակար կլինի ընդլայնել վիճակագրության արտադրումը որոշ աղյուսակներով, որոնք ի սկզբանե չեն նախատեսվել, սակայն հեշտությամբ լրացնելու ենթակա են (ինչպիսին է ջրի փոխանցումների մատրիցան): Սույն աղյուսակները, փաստորեն կարող են կարևոր ավելացված արժեք ապահովել ջուրը հասկանալու համար:
- Իստատի և ՀՀ ԱՎԾ-ի միջև համագործակցությունը շարունակում է մնալ շատ արդյունավետ՝ փորձի և արդյունքների փոխանակությամբ հանդերձ:

Առաջարկություններ

- Շարունակել խորը ուսումնասիրել գրքացանկում նշված պաշտոնական վիճակագրական ձեռնարկները (մասնավորապես SEEA-Ջուր ձեռնարկը), ինչը հիմնական պայման է հանդիսանում Ջրի ֆիզիկական հոսքի հաշիվների և ջրամատակարման և ջրօգտագործման հիբրիդային հաշիվների հաջող կազմման համար

- Մի մոռացեք, որ ՋՀ-ն շարունակական գործընթաց է

- Կասկածների կամ անորոշությունների դեպքում ՀՀ ԱՎԾ աշխատակիցները պետք է կապ հաստատեն Իստատի փորձագետների հետ ցանկացած պահի, էլ-փոստով կամ Skype-ով՝ անհրաժեշտ աջակցություն ստանալու համար, և ընդհանուր առմամբ խնդիրները և լուծումները քննարկելու համար

Ճանապարհային քարտեզ ժամանակացույց (1)

ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվելիք տնային աշխատանքը.

- Թարմացնել Ներքին ջրերի համատեղ հարցաթերթի և ջրամատակարարման և ջրօգտագործման աղյուսակները համաձայն 6.3 գործողության ընթացքում քննարկված վերանայումների:

- Ջրին առնչվող արտադրանքի վերաբերյալ ֆինանսական հաշիվների կոնցեպտուալ շրջանակի և մեթոդաբանությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, առաջարկում ենք խորը վերլուծել SEEA-W-ը և ուշադրություն դարձնել ներկայացված բոլոր օրինակներին և վերլուծված բացառություններին:

- Ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակներ

- Տնտեսության մեջ ջրի հոսքերի մատրիցայի կազմում

Ճանապարհային քարտեզ ժամանակացույց (2)

- Քննարկել հիբրիդային աղյուսակները կազմելու ընթացքում ծագած կարևոր ասպեկտները
- Առաջին գնահատումները ՋՖՀՀ և ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակներից ստացված ցուցանիշների վերաբերյալ
- Տվյալների տարածման ձևաչափի նախագծում, մասնավորապես հրապարակման ամփոփման նախագծի պատրաստում թվինիգի եզրափակիչ փուլում, հավելվածում աղյուսակների և քարտեզների ցուցակ
- Քննարկման ներկայացնել օդի արտանետումների հաշիվների աղյուսակները համաձայն Իտալիա կայացած ուսուցողական այցի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածության